ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 39

31/08/2018

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԹԱՑՈՂ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԵՎ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՀԱՎԱՔ ԿՈՄԲԱՅՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի , ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության 29.08.2018թ. թիվ 05/18.2/6668-18 գրության պահանջներով , հիմք ընդունելով համայնքում հացահատիկի բերքահավաքի ժամանակին չկատարելը (հացահատիկահավաք կոմբայնի բացակայության պատճառով) և բերքի կորուստի հանգամանքը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Աստղաձոր համայնքում 2019թ. առաջին կիսամյակում մեր լեռնային և բնակլիմայական պայմաններին համապատասխան հացահատիկահավաք NOVA -340 մակնիշի 2018թ. արտադրության 4մ. հացահատիկահավաք մասի լայնությամբ , 9մ^3 ծղոտի հավաքման համակարգով զինված ,,Ռոստսելմաշ,, կազմակերպության կողմից արտադրված հացահատիկահավաք կոմբայնը՝ մոտավոր արժեքը 43000000 /քառասուներեք միլիոն/ ՀՀ դրամ , ձեռք բերելու նպատակով առաջարկել Աստղաձոր համայնքի ղեկավարին.
ա. Կազմել և ներկայացնել համապատասխան սուբվենցիայի հայտ 2019թ. ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման ծրագրերում ընդգրկելու վերոնշված կոմբայնը ձեռք բերելու , հակառակ դեպքում կախված համայնքի կողմից ներդրվող գումարի չափից և տվյալ պահի ֆինանսական վիճակից ,
բ. համաձայնություն տալ հացահատիկահավաք կոմբայնը ձեռք բերել ,,ՍՊԵՑՄԱՇ,, ՍՊԸ-ի միջոցով , Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա ընկերության լիզինգային ծրագի միջոցով 20% կանխավճարով , 10 տարի մարման ժակետով ,

համապատասխան պատկան մարմինների կողմից թույլատվության առկայության պայմաններում:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ
6. ԿՆՅԱՉՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**